



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն **քրեական գործերով** կասկածյալներին և մեղադրյալներին անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է **քացառապես վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա**:

Քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով, ինչպես նաև քրեական վարույթի շրջանակներում տուժողի, տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի կամ քաղաքացիական պատասխանողի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց **դիմումների հիման վրա** անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է ստորև նշված սոցիալական խմբերին համապատասխանող անձանց՝

- 1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.
- 2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.
- 3) դատապարտյալներին.
- 4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.
- 5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.
- 6) գործազուրկներին.
- 7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.
- 8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.
- 9) փախստականներին.
- 10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.
- 11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.
- 12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց.
- 13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.
- 14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին.
- 15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.
- 16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՉԻ ԿԱՐՈՂ ՏՐՎԵԼ՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով)։

2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (1,000,000 ՀՀ դրամը) գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ։

3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ

Հանրային պաշտպանի գրասենյակի խնդիրն է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում ապահովել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրումը, որը ներառում է՝

խորհրդատվությունը՝

հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում։

ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝

քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով: Ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական գործով մինչդատական վարույթում, ՀՀ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանում:

ԿԱՊ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԵՏ

Հասցեն՝ ք. Երևան, 0010, Զաքյան փողոց
7-2 շենք, 2-րդ հարկ
Հեռ՝ (+37410) 604 605, (+37410) 600 714,
Հեռապատճեն՝ (+37410) 604 605
Աշխատանքային օրեր՝
Երկուշաբթի - ուրբաթ, ժամը 10:00-18:00
Ընդմիջում՝ 13:00-14:00
Email: pashtpan@advocates.am
Web: www.advocates.am

